Ձեզ գրում եմ Արցախից

Բարև…

Ասել է թե, բարի արև: Բարի արև ուղարկեցիք և նրա ջերմ ու գուրգուրող ճառագայթներով ողողեցիք մեր փոքրիկ երկրամասը և մեր ջերմության ու գուրգուրանքի կարոտ հոգիները:

Ես Տաթևն եմ, սովորում եմ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Պատարայի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում: Ձեր բարեգութ ձեռքով մեր դպրոցում ևս սկսեց գործել ԵՕ դպրոցը: Ասեմ, որ այն առաջիններից մեկն է:

Պատերազմը կատարեց իր սև գործը: Արհավիրք էր, որ կախվեց իմ ժողովրդի և իմ գողտրիկ երկրամասի վրա: Եվ 21-րդ դարում սկսած պատերազմը ոչնչով չտարբերվեց 20-րդ դարի սկզբներին հայ ժողովրդի կյանքում կատարված ամենաողբերգական էջից՝ Մեծ եղեռնից:

Արցախահայությունը ապրեց հիասթափություն ու հուսալքություն: Մեր փոքրիկ սրտերն ու հոգիները ևս անմասն չմնացին այդ ամենից: Աշխարհը քար սֆինքսի նման մնաց անտարբեր և անհաղորդ այդ մեծ ողբերգությանը: Եվ ահա այդ մթության մեջ Դուք վառեցիք այն լույսը, որով պիտի վառվեն պայքարի կերոնները: Դուք Ձեր բարեգործ ձեռքով մեզ վերադարձրիք ապրելու և արարելու հույսը հայրենի հողի վրա: Արթնացրիք դիմակայելու ու պայքարելու ոգին, մեր հողը երբեք չլքելու, ամուր կանգնելու և պայքարելու ի հեճուկս թշնամու և չար ու անհոգի մարդկանց:

Իր երկու տարվա գործունեության շնորհիվ ԵՕ դպրոցը մեզ համար բացեց բազում փակ դռներ: Սովորեցրեց միասնականություն, քիչ-քիչ բայց հաստատակամ նպատակին հասնելու կարողություն, դժվարությունները հաղթահարելու կամք:

Առանց բարի մարդկանց աշխարհը ավելի չար ու դաժան կլինի: Ինչքան լավ է, որ դուք կաք: Ինչքան լավ է, որ Ձեր կրծքերի տակ շողում է այն բարի արևը, որի ճառագայթները հեռուներից հասնում են մեր ծվարած հայրենիք՝ տարածելով հույս, կորով, ջերմություն:

Մեր երախտիքի ու շնորհակալական խոսքը հայտնում ենք Հայաստան Համահայկական հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնին:

Շնորհակալություն մեծ նվիրումի համար:

Շնորհակալություն, որ Դուք կաք:

Մենք դեռ ձեռք, ձեռքի տված կշենացնենք մեր անզուգական Արցախը:

Ձեր Տաթև